ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի, ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» և «Ռեստարտ Իջևան» զիտակրթական-հասարակական կազմակերպության միջև

Ք.Իջևան *«08» նոյեմբեր, 2023 թ.*

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ), ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» և «Ռեստարտ Իջևան» զիտակրթական-հասարակական կազմակերպության միջև (այսուհետ միասին՝ Կողմեր):

Հաշվի առնելով ժամանակակից աշխարհում կենսագործունեության տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների աճող դերն ու նշանակությունը,

Անհրաժեշտ համարելով բարձրագույն կրթական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներմուծումն ու կիրառումը,

Կարևորելով և գնահատելով մասնաճյուղում սովորող ուսանողների ակտիվ ներգրավվածությունն ու պատրաստակամությունը՝

Կողմերը կնքում են Հուշագիրը՝ հետևյալի մասին

Համագործակցության նպատակը և խնդիրները

Հուշագրի **նպատակն** է աջակցել համալսարանում «Ուսանողական թվային ակումբին»՝ բարելավել ԵՊՀ ԻՄ ուսանողական և կրթական միջավայրի թվայնացումը:

Համագործակցությունն իրականացվելու է հետևյալ խնդիրների լուծման ուղղությամբ՝

1. ԵՊՀ ԻՄ և ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» միջև փոխհամագործակցային կապերի ձևավորում,
2. ԵՊՀ ԻՄ և ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» միջև համատեղ աշխատանքային քննարկումների կազմակերպում,
3. ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» կողմից մշակված «Խելացի քարտեզ» նախագծի պլանավորման, ստեղծման և համալսարանում դրա

տեղադրման համար ԵՊՀ ԻՄ կողմից անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում և մասնակի ֆինանսական աջակցություն,

4. ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» կողմից մշակված «Խելացի քարտեզ» նախագծի պլանավորման, ստեղծման և համալսարանում դրա տեղադրման համար «Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպության կողմից անհրաժեշտ միջոցների տրամադրում և ֆինանսական աջակցություն,
5. ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» կողմից մշակված «Խելացի քարտեզ» նախագծի արդյունքում համալսարանի հատակագծի թվայնացված քարտեզի գործարկում և ամփոփիչ միջոցառման կազմակերպում:

Համագործակցության պայմանները

Հուշագրի շրջանակում կողմերը նախապես հստակեցնում են համագործակցության բոլոր չափանիշները: ԵՊՀ ԻՄ տրամադրում է «Խելացի քարտեզ» նախագծի համար անհրաժեշտ տեղեկատվական փաթեթ և մասնակի ֆինանսական աջակցություն, որի չափը կազմում է 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլար: ԵՊՀ ԻՄ աջակցում է նաև «Խելացի քարտեզ» նախագծի արդյունքում մշակված համալսարանի հատակագծի թվայնացված քարտեզը պարունակող մոնիտորի տեղադրման վայրի որոշման հարցում:

Հուշագրի շրջանակում «Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպությունը ապահովում և վերահսկում է ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» «Խելացի քարտեզ» նախագծի ծրագրային գործողությունների անխափան իրականացումը: Կազմակերպությունը տրամադրում է անհրաժեշտ բոլոր ռեսուրսները՝ մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական, «Խելացի քարտեզ» նախագծի կյանքի կոչման համար: «Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպության կողմից ֆինանսական աջակցության չափը կազմում է 450 (չորս հարյուր հիսուն) ԱՄՆ դոլար:

Համագործակցության շրջանակում «Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպությունը պարտավորվում է հետ վերադարձնել «Խելացի քարտեզ» նախագծի համար ԵՊՀ ԻՄ կողմից տրամադրվող գումարը, եթե ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբի» «Խելացի քարտեզ» նախագիծը չգրանցի նախասահմանված բոլոր արդյունքները:

Հուշագրի ուժի մեջ մտնելը, փոփոխություններ և լրացումներ կատարելը, գործողության ժամկետը

Հուշագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և կազմում են սույն Հուշագրի անբաժանելի մասը:

Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմին այն դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցելուց 15 (տասնհինգ) օր հետո:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ

Տնօրենի պաշտոնակատար՝
Անուշավան Մակարյան

US _____

Կ.Ք

«Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպություն

Գործադիր տնօրեն՝
Մելինե Գևորգյան

US _____

Կ.Ք

ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբ»

Համակարգող՝
Նարեկ Գրիգորյան

US _____